

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Զարկային և մաքսային օրենսդրության նորություններ 2

- 1.1 ԶՅ կառավարության որոշումներ ----- 2
- 1.2 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ ----- 3

2. Զարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ 5

- 2.1 Ծրագրեր և կատարողականություն ----- 5
- 2.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների ----- 6
- 2.3 Զարկային և մաքսային թվերի համառոտագիր ----- 7

1. ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 ԶՅ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 26-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԶՅ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	15 հուլիսի 2010թ, N 863-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 34 (768), 28.07.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Կատարված փոփոխությամբ հանվել է օրենքով սահմանված կարգով ՀԴՄ-ի պարտադիր կիրառմամբ գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից հարկային տեսչություն՝ իրենց կողմից օգտագործման համար նախատեսվող ՀԴՄ-ի գրանցման համար ներկայացվող դիմումին կից՝ **պետական գրանցում ստացած՝ տեխնիկական սպասարկում և նորոգում իրականացնող կենտրոնի հետ կնքված ՀԴՄ-ի տեխնիկական սպասարկման և նորոգման պայմանագրի (պայմանագրերի) պատճենը (պատճենները) ներկայացնելու պահանջը**, որով պայմանավորված մի շարք համապատասխան փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 26.08.2004թ. N1325-Ն որոշման մեջ:



Փաստաթուղթ	«Հարկային մարմնի համապատասխան պաշտոնատար անձի կողմից հարկ վճարողի, հարկ վճարողի պաշտոնատար անձանց բացակայության կամ խոչընդոտող այլ գործողությունների հետևանքով ստուգման կամ այլ կերպ հարկային պարտավորությունների հաշվարկման հարկային մարմինների ձախողման փաստն արձանագրելու կարգը սահմանելու մասին» ԶՅ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	29 հուլիսի 2010թ, N 972-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 40(774), 18.08.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվում է հարկային մարմնի համապատասխան պաշտոնատար անձի կողմից հարկ վճարողի, հարկ վճարողի պաշտոնատար անձանց բացակայության կամ խոչընդոտող այլ գործողությունների

հետևանքով ստուգման կամ այլ կերպ հարկային պարտավորությունների հաշվարկման հարկային մարմինների ձախողման փաստն արձանագրելու կարգը:

1.2 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի հաշվարկի և ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի դիմումի ձևը և դրա լրացման կարգը հաստատելու և հարկային մարմնի մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	14 հունիսի 2010թ., N 1423-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 18(370), 02.08.2010թ.
Ուժի մեջ է	2011 թվականի հունվարի մեկից և կիրառվում է 2011 թվականի հունվարի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար

Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատվում է՝

ԱԱՀ-ի հաշվարկի և ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի դիմումի ձևը, ԱԱՀ-ի հաշվարկի և ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի դիմումի ձևի լրացման կարգը,

Ուժը կորցրած են ճանաչվում՝

ՀՀ պետական եկամուտների նախարարի 07.02.2002թ. «Ավելացված արժեքի հարկի հաշվարկի ձևը և դրա լրացման կարգը հաստատելու մասին» N 02/194 հրամանը,

ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 24.03.2008թ. «Ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցում և (կամ) վերադարձ կատարելու մասին դիմումի ձևը հաստատելու մասին» N 04-Ն հրամանը:



Փաստաթուղթ	«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի որոշ դրույթների վերաբերյալ հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարի 2000 թվականի հոկտեմբերի 20-ի N 02/1291 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	04 հունիսի 2010թ, N 1417-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 19(371), 17.08.2010թ.
Ուժի մեջ է	2010 թվականի հոկտեմբերի 1-ից

Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատվել է «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների վերաբերյալ հրահանգը:

Ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ պետական եկամուտների նախարարի 2000 թվականի հոկտեմբերի 20-ի «Ակցիզային հարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի որոշ դրույթների վերաբերյալ» հրահանգը հաստատելու մասին» N 02/1291 հրամանը:



Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N 4046-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	28 հունիսի 2010թ, N 1500-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 19(371), 17.08.2010թ.

Համառոտ նկարագիր

Հրամանով փոփոխություններ են կատարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լիսսի հիմնադրամի միջև կնքված փոխըմբռնման երրորդ հուշագրով նախատեսված հարկային, մաքսային և պարտադիր վճարների գծով արտոնությունների կիրառման N 4046-Ն հրա-



Փաստաթուղթ	«Որոշակի թողունակությամբ կապուղիների կազմակերպման ծառայությունների ավելացված արժեքի հարկով հարկման մասին» պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	14 հուլիսի 2010թ, N7
Յրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 19(371), 17.08.2010թ.

Համառոտ նկարագիր

Ըստ պարզաբանման՝ ՀՀ տարածքից դուրս գտնվող երկու կետերի միջև որոշակի թողունակությամբ Հայաստանի տարածքով տարանցվող կապուղիների կազմակերպման այն ծառայությունների մատուցման վայրը, որոնք մատուցվում են ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեություն վարող

չգրանցված օտարերկրյա անձանց, ՀՀ-ում չի գտնվում: Այդ ծառայությունների նկատմամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան կիառելի է ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափ:

2. ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

2.1 | Ծրագրեր և կատարողական

2.1.1 | Ծրագրեր և կատարողական /հարկային ծառայության մասով/

Հարկ վճարողների սպասարկում

1. | ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 04.08.10թ. N 1733-Ա հրամանով հաստատվել է հարկ վճարողների սպասարկման կենտրոնի կողմից հարկ վճարողների համար սեմինարների կազմակերպման ընթացակարգը: Ընթացակարգը նպատակ ունի կանոնակարգելու հարկ վճարողների սպասարկման կենտրոնի կողմից հարկ վճարողների համար **սեմինարների կազմակերպմանը, սեմինարների ծրագրերի մշակմանն** առնչվող հարցերը: Հաստատված ընթացակարգի համաձայն սեմինարները դասակարգվում են.

- թեմատիկ և ընդհանուր
- ըստ հարկ վճարողների նպատակային խմբերի

Սպասարկման կենտրոնների կողմից յուրաքանչյուր հաջորդ տարվա համար սեմինարների տարեկան ծրագրի նախագիծը կազմվում է մինչև ընթացիկ տարվա **դեկտեմբերի 1-ը**:



Ընթացակարգը հնարավորություն է ընձեռում **հարկ վճարողներին** հեռախոսագրերի, էլեկտրոնային հաղորդագրությունների, այցելությունների, սպասարկման կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունների հարցերի և խնդրանքների արագ և արդյունավետ լուծում:

յությունների վերաբերյալ լրացված հարցաթերթերի միջոցով **առաջարկել սեմինարների թեմաներ**, որոնցից առավել հաճախակի հանդիպողները ներառվում են սեմինարների տարեկան ծրագրում:

2. | 33 ԿԱ ՊԵԿ նախագահի 03.08.10թ. N 1725-Ա հրամանի համաձայն նախատեսվում է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության «Յարկային վարչարարության բարեփոխումներին օժանդակող տեխնիկական աջակցության» ծրագրի հետ հա-

մատեղ կազմակերպել **«Յարկ վճարողների սպասարկում»** ուսումնական դասընթաց հարկ վճարողների սպասարկման բաժիններում և կենտրոններում ընդգրկված հարկային ծառայողների համար: Դասընթացի շրջանակներն ընդգրկում են հարկ վճարողների սպասարկմանն ու իրազեկմանը վերաբերող հարցերը: Առանձին ուշադրություն է դարձվելու էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացմանը վերաբերող հարցերին:

2.1.2 | Ծրագրեր և կատարողական /մաքսային ծառայության մասով/

33 վարչապետի 2010 թվականի օգոստոսի 4-ի «Միջգերատեսչական աշխատանքային խմբեր ստեղծելու մասին» թիվ 617-Ա որոշմամբ ստեղծվել է 2 աշխատանքային խումբ, որոնք զբաղվելու են սահմանների համալիր կառավարման հիմնախնդիրներով: Խմբերից մեկը պատասխանատու է լինելու 33 սահմանային անվտանգության խնդիրների կարգավորման համար: Այս աշխատանքային խմբի ղեկավար է նշանակվել 33 արդարադատության նախարար Գ. Դանիելյանը: Մյուս աշխատանքային խումբը ստեղծվել է 33 Տավուշի մարզի «Բագրատաշեն» սահմանային անցման կետի արդիականացման և եվրոպական չափանիշներին համապատասխանեցման հիմնախնդիրները կարգավորելու նպատակով: Վերջինիս ղեկավար է նշանակվել 33 ԿԱ ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանը:



Տեղի են ունեցել 2 աշխատանքային խմբերի անդրանիկ նիստերը:

2.2 | Գանգատարկումների և ծառայողական քննությունների ակնարկ

2.2.1 | Գանգատարկումներ և ծառայողական քննություններ /հարկային ծառայության մասով/

20.07.2010թ-ից մինչև 20.08.2010թ-ն ընկած ժամանակահատվածում 33 ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննությունն անցկացնող հանձնաժողովի կողմից լսվել են թվով 4 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որի արդյունքում թվով 5 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

33 ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից 20.07.2010թ-ից մինչև 20.08.2010թ ՎՆՆ ընկած ժամանակահատվածում լսվել է թվով 17 բողոք, որից.

- բավարարվել է 3 բողոք,
- մերժվել է 14 բողոք:

2.2.2| Գանգատարկումներ և ծառայողական քննություններ /մաքսային ծառայության մասով/

21.07.2010թ-ից մինչև 20.08.2010թ-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է մեկ ծառայողական քննություն, որի արդյունքների հիման վրա թվով 2 մաքսային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության՝ ստանալով նկատողություններ:

յին ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության՝ ստանալով նկատողություններ:

2.3 | Զարկային և մաքսային թվերի համառոտագիր

2.3.1 | Զարկային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2010 թվական		
		հուլիս	հունվար-հուլիս	Աճը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-հուլիս)%
2	3	4	5	
1	Հաշվառված՝ ԶՎՀՅ ստացած հարկ վճարողներ	1085	8790	91.8
2	Զարկային մարմնի կողմից պետ. բյուջե հավաքագրված եկամուտներ (մլն դրամ), այդ թվում՝	41,284	255,573	116.8
2.1	ԱԱՀ	11,212	60,677	145.2
2.2	Շահութահարկ	5,253	48,714	95.0
2.3	Ակցիզային հարկ	696	3,758	115.2
2.4	Եկամտահարկ	6,699	41,184	127.0
2.5	Պարտադիր սոցիալական ապահովության վճար	10,208	64,900	114.1
2.6	Այլ	7,216	36,341	109.8
3	Զարկային մարմնի կողմից կատարված ստուգումներ (հատ)	2539	15529	97.4
4	Զարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն. դրամ)	6,155	16,330	94.4

2.3.2 | Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2009թ.		2010թ.		Աճը նախորդ տարվա նկատմամբ %	
		հունվար-հուլիս	հուլիս	հունվար-հուլիս	հուլիս	հունվար-հուլիս	հուլիս
2	3	4	5	6	7	8	
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն դրամ)	116,563	19,001	147,162	22,268	126.3	117.2
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը (մլն դրամ), այդ թվում՝	736,977	132,887	985,901	141,902	133.8	106.8
2.1	Արտահանում (մլն դրամ)	146,489	33,691	197,799	26,438	135.0	78.5
2.2	Ներմուծում (մլն դրամ)	590,489	99,196	788,103	115,464	133.5	116.4
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր)	14,326	3,052	15,621	3,672	109.0	120

ևս մեկ քայլ՝

ԲԻԶՆԵՍԻՆ ԸՆԴԱՌԱԶ



եռամսյա պարբերականությամբ
հրատարակվում են
«Հարկատու» և «Մաքսատուն»
ամսագրերը